


քեան գործնական եւ հանրա-
մատչելի մանկավարժութեան
վերաբերեալ նիւթեր:

Բանասիրական քաժնի
մէջ կրթիչ վեպեր, գուարճալի
առակներ, գրոց եւ բրոց, հին
եւ նոր առածներ, տնտեսական
տեղեկութիւններ եւլն:


Ազգային մասն կը պա-
րունակէ վեհափառ Հայրա-
պետի դիւանի տնօրէնութիւն-
ներ, սիւնօղի կարելոր օրա-
գրութիւններ, ուսումնարան-
ների վերաբերեալ կարելոր ո-
րոշումներ, եկեղեցական կեան-
քի տեսութիւններ:

Լիպոյշու եւր, որ ընթեր-
ցող հասարակութիւնն տեսնե-
լով «Արարատի» ուղղութիւն,
քաջալեր կը լինի եւ կը նը-
սրատէ «Արարատի» առա-
ջադիւնութեան թէ քաժանորդ
գրուելով եւ թէ պիտանի յօ-
դուածներ հասցնելով խըմբա-
գրութեան:



ՆՈՐ ՏԵՐԻ

1894. Յուն. 1.



յոսր հանգիսաւոր ընդունելութիւն
Մտեղի ունեցաւ Նորին Վեհափա-
ռութեան մօտ. ժամը 8-ին առաւ. ըստ հա-
ւանդ սովորութեան լսուեց Ս. Էջմիածնի
ճաճարի զանգերի ձայնը, որ հրաւիրում էր
ըստ միաբանութեան հաւաքուել եւ գնալ
շնորհաւորելու Նորին Վեհափառութեան Նոր
Տարին. ներկայ էին եպիսկոպոսներ, վարդա-
պետներ, սարկաւազներ եւ եկեղեցու սպա-
սաւորներ:

Վեհափառը շնորհաւորելով միաբանու-
թեան Նոր Տարին, բարեհաճեց հետեւեալը
բարեմաղթել նորանց. — Դուք եկել էք իմ նոր
տարին շնորհաւորելու. շնորհակալ եմ: Ես էլ
ձեր նոր տարին կշնորհաւորեմ եւ կբարեմաղ-
թեմ որ ամբողջ տարին անփոսնգ, անմիտ
պահպանէ ձեզ Աստուած:

Անոր ժողովուրդը նեղութեան մէջ է, Աս-
տուած ինքը պիտի այցելութիւն անէ, ես
կաղօթեմ առ Աստուած եւ կինդրիմ, որ
դուք էլ միացնէք ձեր աղօթքը իմինիս հետ.
բազմութեան ձայն միշտ լսելի է Աստուծոյ
առաջ. մենք մտածելով մեր ժողովրդի վի-
ճակի վրայ, չենք կարող մի հանգամանք
աննկատելի թողնել. եթէ մենք մեզ հոգե-
ւորականներին բաղդատենք ժողովրդի հետ,
ցաւելով պիտի խոստովանենք, որ հոգեւորա-
կանութիւնը շատ եւ շատ յետ է մնացած
ժողովրդից. ժողովուրդը այսօր իրաւաբանու-
թիւն էլ կհասկանայ, գիտութիւն էլ ունի եւ
ամեն բան կքննադատէ, որովհետեւ կհաս-
կանայ այդ, իսկ հոգեւորականներս շատ յետ
ենք: Թուել միառմի այստեղ այն պատճառ-
ները, որոնց շնորհիւ հոգեւորականութիւնը
փոխանակ յառաջադիմելու՝ յետադիմել է,
յարմար չէ տեղն ու ժամանակը. յուսամ
որ ուրիշ առթիւ կարողանամ ձեզ բացատ-

րել այդ ցաւալի երևոյթի հիմնական պատճառները: Եւ կառավարկեմ ձեզ ձեր գործունէութեամբ, ձեր կեանքով յետ գնալ, յետ գնալ ասելով կհասկնամ որ մենք հոգեւորականներս մեր կոչումով միշտ պէտք է իրրւ օրինակ մեր աչքի առաջ ունենանք մեր նախահարց կեանքն ու գործերը, աշխատենք նոցա շաւղով ընթանալ, բայց միւսնոյն ժամանակ պիտի ջանանք ժամանակակից կեանքի հետ էլ համակերպուիլ, նրա ընթացքը ըմբռնել: Մեր նախահարցերը՝ Սահակ, Մեսրոպ, Ներսէսներ իրանց ժամանակ աշխատեալ են մեր ազգի կրթութեան, նրա կրօնական, բարոյական դաստիարակութեան վրայ, ծաղկեցրել են մեր գրականութիւնը, փայլեցրել մեր վանքերը և օրինակով ցոյց տուել, թէ մենք ինչ պէտք է անենք, ինչ պարտաւորութիւններ ունինք դէպի մեր ազգը: Իսկ այսօր նոր տարուայ առթիւ բարեմաղթում եմ ինձ և ձեզ, բոլորիդ շնորհաւոր նոր տարի, ցանկանում եմ որ մենք մեր մէջ ունենանք միաբանութիւն և բարոյական ոյժ ժողովրդեան բազմազիմի կարեաց բաւարարութիւն տալու համար: Սրհնեալ լինիք:

Այս համառօտ բանախօսութիւնից յետոյ Նորին Վեհափառութիւնն առաջարկեց միաբաններին իւր սուրբ աջը և իրրւ Նոր տարուայ անդրանիկ պարգև բարեհաճեց իւրաքանչիւրին մի մի փառակազմ օրացոյց և իւր աշխատութիւններից Վրաւիրակ երկրին Աւետեաց, շնորհել: Միաբանները ակնածութեամբ մօտենալով համբուրեցին Նորա աջը և հեռացան:

Միաբանութեան ընդունելութեան ժամանակ արդէն եկել և Վեհարանի ընդունարանում սպասում էին ճեմարանի սաները իւրեանց ուսուցիչների առաջնորդութեամբ: Ներկայանալիս աշակերտներից մէկը՝ երկրորդ լսարանցի, մի գեղեցիկ ճառով բախտ ունեցաւ իւր ընկերակիցների և իւր կողմից բարի և շնորհաւոր Նոր Տարի հայցելու Նորին Վեհափառութեան: Վեհափառը բարեհաճեց

աշակերտներին մի քանի խօսքով բացատրել, թէ նոքա իրրւ ճեմարանի սաներ ինչ պարտականութիւններ ունին և թէ ինչ է սպասուում նոցանից: Նոքա սովորելով մի քանի տարի ճեմարանի մէջ, շատ անգամ երիտասարդական պարծենկոտութեամբ կարծում են թէ շատ բան գիտեն, ամեն ինչ հասկանաւ են: Իրաւ է, եթէ իրանք իրանց բաղգատելու լինին գիւղացիների հետ, ժողովրդի չըկըրթուած. դասակարգի հետ, բնական է որ շատ է իրանց իմացածը, բայց ինչքան չնչին է այդ, եթէ օրինակ վերցնեն իսկապէս կըրթուած զարգացած մարդկանց: Ահա այդ տեսակ մարդկանց պիտի աշխատեն հասնել, նոցա պիտի օրինակ առնեն և շարունակ աշխատեն: Աշակերտները աւարտելուց յետոյ ժողովրդի մէջ մտնելով կամ իրրւ ուսուցիչ կամ իրրւ քահանայ՝ պիտի ցանեն բարի սերմեր, նոքա իրանք պիտի դաստիարակեն, առաջնորդեն ժողովրդեան դէպի բարին: Ապա օրհնեց ուսուցիչներին, աշակերտներին, բոլորին օրացոյցներ շնորհեց, իսկ լսարանցիներին և ուսուցիչներին պարգևեց նաև Վրաւիրակ երկրին Աւետեաց:

Հ. Խորէն ծ. վ. Ստեփանէի նախասահմանեալ ծրագրով՝ հոգեւորականներից և աշակերտներից յետոյ եկան կարգով ներկայանալու Նորին Վեհափառութեանը տպարանի ծառայողները թւով քսան և չորս հոգի իրանց նոր կառավարչի առաջնորդութեամբ: Վեհափառը շատ անգամ է ցանկութիւն յայտնել տրապարանը բարեկարգած տեսնել, որն իւր ներկայ խեղճ դրութիւնից դուրս գալով մեծ օգուտներ կարող է տալ Վանքին և միջոց կրտայ անընդհատ ի լոյս ընծայել մեր ձեռագրեաց մատենադարանում ամփոփուած նախնեաց թանգազին յիշատակարանները: Այդ յոյսով նա կարգել է նոր կառավարիչ, որի վրայ մեծ պարտականութիւն է ընկնում և այդ մոռով էլ խօսեց նոցա հետ՝ ընդունելով նոցա շնորհաւորութիւնը:

Նա ինքը 35 տարի առաջ Պօլսից Վարա-

գայ վանքն է տարել տպարանն այնտեղից Տարօն և անձամբ միջոց է ունեցել տպարանական գործի արուեստի հետ քսմ ծանօթանալու և ստորի պահանջում է գրաշարներից շարելիս ուշադրութիւն դարձնեն արուեստի վրայ, պատիւ չէ բերում Մայր Աթոռի տը պարանին այնպիսի խեղճ բաներ տպել, մինչդեռ ներկայումս ամեն տեղ լաւ են տպում օրինակ վիճինայում, բայց նոյն իսկ Մոսկվայում, թիֆլիսում և այլն։ Հնազանդութեամբ և խղճով կատարեցէք ձեր գործը, այնպէս որ նախանձելի լինի մեր Ա. Լ. Վ. Թաթևի տպարանի գրութիւնը և իմ յայտերէն մէկը գտնէ դուք կատարէք։ Աստուած ինքը ձեր թեւերուն ոյժ կտայ։

Այնուհետև խումբ-խումբ ներս հրաւիրուեցին վարարշապատ գիւղի բազմութիւնը համբուրելու Նորին Վեհափառութեան աջը և նորան շնորհաւոր Նոր տարի մարտիւնու ժողովրդեան այդ բազմութիւնը յիշեցրեց մի բոպէ այն փայլուն ընդունելութիւնները, այն ժողովրդական մեծամեծ ցոյցերը, որ գեռ վառ են շատերիս յիշողութեան մէջ։ Վանքի պլանի սպասարաններն էլ արժանացան այդ օրը համբուրելու Նորին Վեհափառութեան աջը և մի-մի օրացոյց նուէր ստանալու, որ տրւում էր նաև գիւղացիներին։

Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր Ի 5 Ե Ի 6.

Արգէն բոլորուել էին երկու տարի և Ա. Լ. Վ. Թաթևի Աթոռը դրկուած լինելով Գահակայից, այնպիսի հանգիսաւոր, օրեր, ինչպէս են Նոր տարին, Զորհնէքը և այլն՝ շատ էին կորցնում իւրեանց սովորական շուրջը։ Այս տարի բախտ ունեցանք տեսնելու հայրապետական Զորհնէքի հանգիսաւոր տեսարանը։ Ճրագալուցի հանգիսաւոր ս. արարողութեանը ներկայ էր Նորին Վեհափառութիւնը, տաճարը լի բազմութեամբ։ Նախառօնակի ժամանակ մոմեր բաժանուեցին հոգևորականներին և աշակերտներին և երբ վերջացաւ

արարողութիւնը, բոլորը վառ մոմերը ձեռներին շարականներ երգելով գնացին Աղանառուն, Վեհափառ բոլորի գլխին, որ այդ երեկոյեան սեղանակից եղաւ միաբանութեանը։ Արգէն ուշ էր, մութն ընկած, եղանակը սաստիկ ցուրտ, օգը սառցաբերելներով լի, որոնք բոլորմութիւ մոմերի լոյսի ճառագայթներից ցոլանալով մի տեսակ խորհրդաւոր տպաւորութիւն էին թողնում նայողի վրայ։ Ահա այդ սաստիկ ցուրտն էր պատճառ, որ միւս օրը Զորհնէքի հանդէսը տաճարի մէջ կատարուեց։ Տաճարը լի էր ժողովրդով, Վանքի Աւագ բեմը, ինչպէս լինում է հանդէսների ժամանակ, լայնացրած էր, ուր բարձրանալով Վեհափառը բազմեց աթոռի վրայ, իսկ եպիսկոպոսներն ու վարդապետները, շուրջառներ գցած շարէշար կանգնեցին երկու կողմերում։ Ինքի մէջտեղում դրուած էր մի մարմարեայ աւազան ջրով լի, ուր և Նորին Վեհափառութեան ձեռքով օրհնուեց ջուրը։

Այդ օրը, երբ միաբանութիւնը ներկայացաւ Վեհափառին, Նա ասաց.

« Եկեր էք Քրիստոսի ծնունդ շնորհաւորելու, սրբազան եպիսկոպոսունք, վարդապետներ, սարկաւագներ։ Ես փոխադարձաբար ձեզի կըղարձենամ։ Այսօր շատ խորհրդաւոր օր է, այսօր Քրիստոս աշխարհ գալով, մարդ դառնալով, խաղաղութիւն բերաւ աշխարհիս, հըրեշտակներ աւետեցին այդ փրկարար լուրը երկրիս, երգելով բարձունքից, «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն»։ Ես էլ կմաղթեմ ձեզի խաղաղութիւն, երջանկութիւն, վասն զի մենք այստեղ, այս վանքին մէջ հաւարուեք ենք, հեռու աշխարհից, աշխարհային կեանքից, մենք ուխտեր ենք մտածել մեր հոգու համար, յուսալով արժանանալ երկնից արքայութեան և այդ է մեր նպատակ։ Բայց ինչպէս կարող ենք հասնել երկնից արքայութեան. Քրիստոս ինքը այդ մեզ կսոյրցնէ ասելով, պէտք է երեխայի պէս արգար լինենք, նոցա պէս

միամիտ, մանկական միտք ունենալու է. «Եթէ ոչ լինիջիք իրրեւ զմանկտիս՝ ոչ կարէք մտանել յարքայութիւն երկինց»։ Նա ինքը այս հանդիսաւոր օրը ներկայացաւ մեզ մանկան կերպարանքով, իւր մեզ ուսուցած անմեղութեան, արդարութեան պատկերով և մենք ամեն օր կաղօթենք և կ'անդրենք Աստուածանից «Խրոտ սուրբ հաստատեա յիս Աստուած և հոգի ուղիղ նորոգեա ի վորի իմումս։ Իմ ցանկութիւնս է ձեր մէջ հաստատուած տեսնել խաղաղութիւն, իմանալ որ դուք հոգւով և մտքով վերանորոգուած էք մանկանց պէս և կարժանանաք երկար տարիներ այստեղ միախմբուել և տօնել այս հանդիսաւոր տօնը։ Աստուած օրհնէ և երջանկացնէ ամենքիդ։

Միաբանութիւնից յետոյ ներկայացան դարձեալ աշակերտները, հաշտարար դատաւորը, գաւառապետը, փոստի կառավարիչը և գիւղի հասարակութիւնից շատերը։

Վեհափառը այդ բոլոր ժամանակի չնայելով միշտ ներկայ էր լինում եկեղեցական արարողութեանցը և այնքան մարդիկ էր ընդունում, իրան շատ լաւ էր զգում։

Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր Ի 15.

Այսօր Նորին Վեհափառութեան անուանակոչութեան տօնն էր. երրորդ անգամն էր արդէն, որ միաբաններս այս կարճ ժամանակում պիտի համախմբուած բախտ ունենայինք ներկայանալու Նորին Վեհափառութեան։ Այդ օրը լինելով նաև Յովհաննու Մկրտչի տօնը՝ առանձին շքեղ հանդիսակատարութեամբ է կատարուում։ Մայր Տաճարում ինչպէս յայտնի է, հարաւային պատում, Ս. Իջման տեղի հանդէպ, Յովհաննու Մկրտչի անունով առանձին սեղան կայ շինած, ուր պահուում է Ս. Միւռօն օրհնելու անօթը, որի վրայ մշտաւառ կանթեղ է քաշ արած։ Ամեն մի ուխտաւոր Ս. Էջմիածին գալով պարտք է համարում այդ սուրբ անօթը համբուրել։ Երեկոյեան, ամսի 14-ին, այդ սե-

ղանը զարդարած էր և նրա առաջ կատարուեց ժամասացութիւնը և հանդիսաւոր նախատօնակը. Հայրապետը եկեղեցի իջաւ մեծաշուք թափորով. Վեհափառը ինքը բուրվառեց միաբաններին և բաղմաթիւ ժողովրդեան, Տօնի առաւօտը բոլոր միաբանները, աշակերտները և հանդիսականները ժամը իննին հաւաքուեցին Մայր Տաճար, ուր Վեհափառի գալուց յետոյ սկսուեց Հայրապետների համար յատուկ սահմանած մաղթանքը, որից յետոյ մի լսարանցի աշակերտ ճառ կարդաց։ Անմիջապէս յետոյ սկսուեց պատարագը, իսկ ժամի երկուօրից մինչև 3-ը պաշտօնական փառահեղ ճաշ տեղի ունեցաւ Վանքի սեղանատանը։ Ի պատիւ Նորին Վեհափառութեան Այդ ճաշին հրաւիրուած էին ժողովրդականներից բաղմաթիւ հիւրեր, Վաղարշապատի բոլոր պաշտօնեաներ և Երևանից Վեհափառի տօնը շնորհաւորելու եկած հիւրերը։ Սեղանը շատ կանոնաւոր էր, նրա վրայ հսկում էին հէնց այդ օրը իւր պաշտօնի մէջ մտած նոր ծախսարարապետ Գեորգ Ներսէս Եպիսկոպոսը և չորս սարկաւազներ։ Սեղանի վրայ առաջարկուեցին կենաց բաժակներ, որ ընդունուում էր իւրաքանչիւր անգամ կեցցէներով։

Առաջի բաժակը առաջարկողն էր Նորին Վեհափառութիւնը.

«Աշխարհումս երկու բան կայ, որ միշտ երկու բան կ'յիշեցնէ. հանելուկ չէ ասածըս, այդ ամեն մէկը գիտէք. եւր աչքներս վերև, գէպի երկինք կ'յառենք, կապոյտ երկինք կ'նայենք, Ամենակարող Աստուած կ'յիշենք, երբ երկիր կ'գիտենք, այնտեղաց կարգ ու կանոնները, մեր մարդկային կենցաղավարութիւնը քննելով, երկրիս իշխանները, մեր Կայսրը կ'յիշենք։

Կայսրն է, որ երկրիս խաղաղութիւն կը պահպանէ, Նրա շնորհիւն է, որ մենք այստեղ նստած հանգստութիւն, ապահովութիւն կ'ապրենք, կ'առաքանենք, կ'օրհնենք Նրա կեանքը, կարգ ու կանոնի պահպանողը և ներկայացուցիչը Նա է, կեցցէ մեր Կայսրը։

Քոյսը յոանկայս լսելով Հայրապետի խօսքերը միաձայն ձայնակցեցին և պատասխանեցին երկար կեցցէներով: Աշակերտական խումբը երգեց «Տէր Կեցո զկայսրն մեր, օրհնեբար:

Կառաւարկեալ օգնականը առաջարկեց հորին վեհափառութեան կենացը, բարեմաղթելով հորան երկար և գործունեայ կեանք իւր հօտը հովուելու և մխիթարելու համար: Լսուեցին երկար կեցցէներ ինչպէս բոլոր ժամանակ այս անգամ ևս ճեմարանի երգեցիկ խումբը իւր ներդաշնակ երգեցողութեամբ երգում էր կենաց բաժակին «Թող բարձրացնեն» երգը: Ահա այդ ժամանակ խորէն ծ. վ. Ստեփանէն, որ ինչպէս միշտ այս անգամ էլ կանգնած էր վեհափառի մօտ, հրա հրամանները կատարելու առաջ անցաւ միաբանից կարգը և այնտեղից մեծ ոգևորութեամբ դուրստեց հորին վեհափառութեանը միաբանութեան կողմից, յայտնելով այն միտքը, թէ ամբողջ ազգը և մենք միաբաններս անհուն սիրով և սրտով միացած լինելով հրա անձի հետ, ոգևորուելով հրա անցած փայլուն գործերով, անչափ ուրախացած ենք այսօր հրան մեզ Պետ, Կլուխ տեսնելով, Ս. Էջմիածնի Հայրապետական գահիրայ բազմած: Մենք ամենքս էլ յոյսերով լի ենք, որ հա կառաջնորդէ մեզ դէպի այն լոյսը— յառաջագիւծութիւնը, որ հա քարոզել է իւր կեանքում: Աշակերտները երգեցին «Տէր կեցո մաղթանքը:

Վեհափառը նորից բարեհաճեց կենաց բաժակ առաջարկել յայտնելով այն միտքը, որ սիրում է յաճախ կրկնել:


«Խորէն վարդապետ մեծ - մեծ գոյնտից խօսքեր շուրջեց ինձ համար, բայց ես կճանաչեմ զիս՝ այդ մեծաշնչին բառերէն երբէք իմ սիրտս չի բարձրանար: Կամ զի գիտեմ թէ մի մարդ, այն էլ իւր ծերութեան հասակում, միայն ոչինչ կարող է գործել առանց օգնականի: Գիտեմ ու կը հաւատամ, որ իմ փոքրիկ հօտ՝ Հայոց ժողովուրդն ինձ պիտի օգնէ, այլ իմ մերձակոյս և անմիջական օգնիչը դուք էք, սրբազան եղբարք, և համայն

միաբանութիւն սուրբ Գրիգորի տան, որոնք ինձ հետ միացած՝ պէտք է աշխատենք երկրին և մեր ժողովրդեան համար:

Աստի կառաջարկեմ իմ այս բաժակ բոլոր իմ գործակից միաբանութեան կենաց համար, որ հաւատարիմ մնալով իրենց ուխտին, ի մի սիրտ և հոգի աշխատին ի փառս Աստուծոյ և ի պայծառութիւն սրբոյ Աթոռոյ:

Այս բաժակը միւսներին նման ընդունուեց բուն ոգևորութեամբ, իսկ աշակերտները երգեցին «Ի բիւր ձայնից բնութեան շքեղ հրաշալի երգը: Ճաշը արգէն վերջացել էր, վեհափառը օրհնելով՝ մեկնեց, վեհափառի յատուկ հրամանաւ առանձին հագացողութիւն եղաւ աղքատներին ու խեղճերին, որոց համար առանձին սեղան կազմուեցաւ:

ՄԵՍՐՈՎԵՐ Վ. Տ. ՄՈՎԱՍԵՍԵԱՆ:



ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՆՈՒՆԴԷ

ԱԼԱ ԿՈՅՍ ՅԵԱՍՏԻ
ԵՒ ԵՆՈՒՆԴԷՆ, ԵՒ ԿՈ-
ՉԵՍՏԵՆ ԶԱՆՈՒՆ ՆՈՐԱ
ԷՄՄԱՆՈՒԷԼ, ՈՐ ԹԱՐԳ-
ՄԱՆԻ ԸՆԴ ՄԵԶ ԱՍ-
ՏՈՒԱՆԻ, ԵՍՏՈՅԻ, Է. 14.



արթուցիչ սուրբ ձայնէ այս-
մարգարէի ձայն, խորալէլի մը-
խիթարիչ ձայն: Անցան դա-
րեր, խորալէլը զօրանում էր՝
պայծառ ապագան նախատես-
նելով: Կորցնում էր մարդ իւր
ներքին մխիթարութիւնը, մար-
գարէի ձայնից լցւում էր յու-
սով և մխիթարւում երկպառակւում էր ին-
քն իւր մէջ, աղերսական աչքէր գարձնում
հորա վրայ, որ պէտք է քարս Բանի - քանի